



ՎԱՐԿԱՆ ՔԱՀԱՆԱ ՏՅՈՒՎԿԵՐՅԱՆ

ժԱՄԱՆԱԿԻՆ ԱՐԺԵՔԸ*

ՀՈՒՅՍԵՐՈՒ ՄԱՅՐԱՄՈՒՏ—ՀՈՒՅՍԵՐՈՒ ԱՐԵՎԱԾԱԳ

«Մինչդեռ ժամանակը մեր ձեռքն է,
բարիք ընենք ամենուն»:

ԳԱՂ. Զ 10

Սովորաբար, նորածագ տարվան սկիզբը, ամեն հասակի մարդիկ, անհուն ու անխառն ուրախություն մը կզգան: Սրտաբուխ մաղթանքներ և նվերներ կփոխանակեն: Շնորհավորության քարտեր կղրկեն իրենց հարազատներուն, և նույնիսկ ներողամտության ոգի ցույց կուտան հակառակորդներու հանդեպ, այն անդրդվելի համոզումով, թե վերանորոգված հոգիով միայն կարելի է մարմին և արյուն տալ այն իղձերուն և հույսերուն, որոնք չիրականացան մեռնող տարվան ընթացքին, և սակայն հիմա, կհավատան, թե նոր տարվան արշալույսը, իր գեղածիծաղ, խնդուն ու խոստովանալից դեմքով, անպայ-

մանորեն պիտի պսակե այդ հույսերը հաշողությամբ:

Ամեն մարդ, առանց սեռի ու տարիքի խտրություն, բարիք մը կակնկալե ամանորի ծագումեն:

Ձավակը՝ իր նախասիրած նվերները: Հայրը՝ գործի հաշողություն: Մայրը՝ հանգստավետ կյանք: Մերունին՝ խաղաղ օրեր: Երիտասարդուհին՝ կյանքի ընկեր: Պաշտոնյան՝ դիրքի ու թոշակի բարձրացում: Պանդուխտը՝ հայրենադարձի կարելիություն: Բանտարկյալը՝ ազատ արձակում: Հիվանդը՝ լիակատար ապաքինում: Սգավորը՝ հոգեկան անդորրություն: Եվ աշխարհավեր պատերազմների պատուհասված ժողովուրդները՝ խաղաղություն, ազատություն և ապահովություն:

Մեռնող տարին, մտածող մարդուն համար, խոկումի ու խորհրդածության տարի մը պետք է մնա:

* Հաճույքով արտատպում ենք Ֆրեզնոյի հայոց Ս. Պողոս Մայր Եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Վարդան քահանա Տյուվկերյանի վերջերս Կալիֆորնիայում հրատարակած «Լյանքը գերեզմանեն անդին» քարոզաբարձի սույն գլուխը նոր տարվա առթիվ:—Խմբ.:

Ամանորի սեմին վրա կեցած, պետք է տարած իր նաչվածքը, իր կյանքին խլված 365 օրերուն վրա, թե ինչպիսի օրեր հղան աղոթք, նյութապես և բարոյապես որքան կրցավ օգտագործել այդ օրերը իրեն և իր անմիջական շրջանակի մարդոց բարվույն համար: Եթե շահեր ապահովեց, կղբա՞ այն սուրբ ուրախությունը, թե արդար վաստակի արդյունք են աղոթք: Եթե սխալներ ու կորուստներ ունեցավ, ո՞րչափով հանցապարտ կնկատես ինքդինքը՝ իր խղճին և Աստուծո առջև:

Իր դատողության և խղճմտանքի ձայնին ունկնդիր մարդը գիտե, թե ուրկե կուզան իր հաջողություններն ու ձախողությունները, և ըստ այնմ կճշտե իր կյանքին ուղղությունը, որպեսզի դալիք օրերու մեջ չկրկնվին միևնույն սխալներն ու մեղքերը, որոնց հետևանքով այնքան կորուստներ կրեց ինք, և թերևս իր անխորհուրդ ընթացքով աուժեցին նաև ուրիշները:

Բնական է, որ մեր գործերուն հետ ընթացող սխալները անխուսափելիորեն հետևանք են կա՛մ մեր անհոգության, և կամ ալ աղոթք հառաջացած են պարագաներու հարկադրանքն:

Այս աշխարհի նյութական ճոխությունները, հաջողություններն ու գեղեցկությունները չեն որ արժեք պիտի տան մեր կյանքին: Այդ բոլորը նպատակ ունին միայն սնուցանելու և հաճոյացնելու մեր մարմինը: Մենք գիտենք, որ իրական ու տևական արժեքը կյանքին մեր բարոյական բնության մեջ է, կարևորը՝ մեր հոգիին ազնվացումն ու սրբացումն է:

Ամանորի կազդուրիչ գորությունն ու ուրախությունը պիտի զգանք լիապես այն ատեն, երբ մեր հոգին ջահավորենք Քրիստոսի կյանքին հավերժապետ լույսով...:



Քրիստոնեական բարոյականով դաստիարակված հոգին շերմորեն կհավատա, թե Աստված մարդը ստեղծեց հավիտենականության համար: Բնական էակին կոշտը երկրի վրա ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխատիլ, հոգնիլ, տառապիլ ու պայքարիլ անմահ կյանքի նվաճումին համար:

...Անժխտելի իրողություն է, որ երկու հազար տարիե ի վեր, մարդիկ և ժողովուրդներ, ամեն նոր տարվան սկիզբը, զգալական խաբ-

կանքը կունենան փայփայիչ հույսերով և երազներով օրորվելու: Եվ սակայն կմնան հոն, ուր որ էին անցյալ տարի, միևնույն դժգոհություններով հուսախաբ ու վիրավոր:

Ինչո՞ւ...:

Որովհետև մեր պահանջներն ու ակնկալությունները նյութական ցանկություններե կբխին: Կփափագինք հարստանալ, տուներ և կալվածներ ունենալ, պատիվ և փառք ստանալ, հանրային բարձր դիրքերու տիրանալ: Այս բոլոր բաները կուզենք ապրելու համար խաղաղ, հանդիստ ու երջանիկ կյանք մը այն աշխարհին մեջ, ուր գերեզմանն է մեր ապագան:

Ամեն նոր տարի, որ կծնի, որոշ ու հստակ կընծայե մտածող մարդուն, թե ի՞նչ է իր կոշտը, թե ո՞ւր է կյանքին հաջողության ու երջանկության բանալին, թե ինչպե՞ս օգտագործելու է տարվան օրերը, որ Աստուծո հաճելի ըլլան:

Անշուշտ չենք կրնար ուրանալ, որ այս կյանքն ալ ունի իր անուշությունները, ունի անդիմադրելիորեն իր փորձիչ հրապուլյունները, որ շատ անգամ կգերվինք ու կտարվինք աղոցմե: Բայց զգուշը պետք է ըլլանք, որ ամեն բարիք, ամեն ուրախություն և երջանկություն, որ երկրեն կուզա, լեցուն է պատրանքներով և դժբախտ օր մը անպայման պիտի զգանք ամբողջ դառնությունը, հուսալքիչ ունայնությունը այդ վաղանցուկ վալելքներուն:

Երկրեն շահված ուրախություններն ու բարիքները կըլլան սուրբ ու սրտապնդիչ այն ժամանակ, երբ մեր սիրտը կեղրոն կղարձանեք սիրո, գթության և զոհողության առաքինություններուն:



Աստուծո մեզի շնորհած բարիքներուն մեծագույնը կրնանք նկատել ապրելու համար մեզի տրված ժամանակը: Ոչ մեկ զորություն, ոչ մեկ բարիք չի կրնար տալ մեզի այն ապահովությունը, այն մնայուն արժեքն ու ուրախությունը, որքան ժամանակը իր պատեհություններով կուտա մեզի:

Հարստությունը, առողջությունը, փառքը, նաև կյանքին ամեն տեսակ վալելքներն ու մեծությունները, անհաստատ, անկայուն զո-

րուձյուններ են, մեր ձեռքը չէ զանոնք պահե-
լը, դժբախտ պարագաները կարող են ա-
նակնկալորեն զրկել մեզ այդ բուրնի, որով-
հետև անոնցմե և ոչ մեկը շունի աղերս հա-
վտենականության հետ: Անոնց կապերը
դյուրաբեկ են, միացած են այս նյութական
կյանքին և կվերջանան մեր ապրած օրերուն
հետ:

Ժամանակը սակայն ասոնցմե ավելի խու-
սափուկ է: Երբեք կանգ չառնել, մեր սրտի
զարկերուն հետ արագորեն կսահին իր բուր-
նի և մեր անտարբերությամբ ու հաճոյա-
սեր վարքուբարքով կրնանք կորսնցնել ու
փշացնել մեր կյանքին լավագույն տարիները:
Աղոր համար պետք է լայնորեն օգտվիլ
ժամանակի ներկայութենեն, շթողուլ որ փախ-
չի ան, առանց ձգելու իր ետև բարության
գործ մը, երախտագիտության արարք մը և
հիշատակելի անուն մը...:

* * *

Դժբախտաբար մարդիկ այս երկնապարզև
բարիքին կարևորությունը չեն զգար, չեն
ըմբռնել, կթողուն, որ ժամանակը իր թան-
կագին պատեհություններովը կորսվի, իրենց
կյանքին օրերն ու տարիները մսխվին ունայն
զվարճություններու մեջ: Եվ օր մըն ալ, խո-
րագույն ծերության մեջ, դառնասիրտ կնային
ետև և չեն գտներ իրենց անցյալին մեջ իրենց
հիշատակը հավերժացնող, իրենց վերջալույսի
օրերը քաղցրացնող ոչ մեկ մխիթարական
գործ:

Ժամանակը ամենեն թանկագին ստաց-
վածքն է մարդուն, պարզևներուն պարզևն է
ան: Թե՛ աղքատը և թե՛ հարուստը հավասա-
րապես բախտավորված են անով:

Գիտնանք նորածագ տարվան մեն-մի բո-
պին հարզը: Գործածենք իր օրերը, որքան
մեր անձնական հաջողություններուն, նույն-
քան և մեր նմաններուն բարձրացման ու հա-
ռաջդիմության համար: Օգտագործենք ժա-
մանակը իր լիության մեջ, Եկեղեցին պայծա-
ռացնելու, համայնքը զորացնելու, մշակու-
թային արժեքները գնահատելու, բարեգոր-
ծությունը քաջալերելու և օգնելու անխափր
մարդասիրական գործերու և նպատակներու:

Ճշմարիտ քրիստոնեայի մը պես ապրելու
և գործելու համար, նկատի պետք է առնենք
կյանքի այն արվեստագետները, որոնք եր-
բեք գոհ չեն իրենց ստեղծագործության ար-
դյունքեն, շարունակ կարբագրեն, կհզկեն,
կկոկեն և կտառապին կատարելության դրոշ-
մը տալու համար իրենց հոգիի ու մտածումի
հղացումին...:

* * *

Ամեն նոր տարի, որ կուգա ու կերթա, ան-
փոխարինելի է իր արժեքով, անկշռելի է իր
բարիքներով, և մանավանդ իր ընծայած
թանկագին պատեհություններով:

Ամեն ամանոր մեր կյանքի պարտեզին մեջ
նոր ծառ մըն է տնկված, որ աճելու, զորանա-
լու և պտղաբերելու համար մեր գուրգուրոտ
հոգածության պետք ունի...:

* * *

Նոր տարվան արշալույսը անսխալորեն և
հստակորեն ցույց կուտա մեզի առաքինու-
թյան ուղին, որ Հիսուսի կյանքին ուղին է,
լուսաճ սճունչ ճամբան փառավոր գործերու և
նվիրումներու, մտնենք այն ճամբան ներս,
ազատ ու համարձակ, և պիտի զգանք մեր
հոգին վերանորոգված, մեր սիրտը շարին
ազդումներեն ազատագրված և մեր միտքը՝
ավելիչ տարակարծություններե խաղաղած:

Այն ճամբուն վրա, ամեն բան նոր ու երի-
տասարդ պիտի գտնենք, աշխարհը ապրելու
արժանի, մարդիկը բարեկամ և օգտակար,
նոր տարին իր ուրախություններովը սուրբ և
կյանքն ալ անանց ու հավիտենական:

Ալ պիտի չվախնանք մահեն, պիտի շոտ-
կանք գերեզմանեն, ամանորը ի՛նչ ցավ, ի՛նչ
նեղություն, ի՛նչ կորուստ և ի՛նչ տեսակ մահ
ալ բերե մեզի, պիտի խոնարհինք գոհունա-
կությամբ Աստուծո բարի կամքին առջև: Ո-
րովհետև կհավատանք, որ ճշմարիտ մահը
մեր մարմնին մահն է, իսկ մեր հոգին, որ ոչ
հող է և ոչ ալ մարմին, պիտի մնա անմահ և
պիտի ապրի Տիեզերական Մեծ Հոգիին հետ,
հավերժալույս փառավորության մեջ:

